ԼՈՅՍ
ՀԱՅԴԷՍ

Գ. ՏՄԲՊ

ՀՐԱՏԱՓ Գ.

ԹԻՒ ԿԳ. 63 — 1877 — ՕՒՆԻՍ 4 ՏԱՐԱԹ

ԿՐՕՆԱԿԱՆ

Ս. ՊԱՏՈՒՊԱՏ ԼՈՒՍԱՒՈՐՈՒՆՔ

*Հայրենիքի 343 թուոյն մէջ Խ. Յ. Սարաճեան էֆ. Պատմութեան կա-
թուղիկոսութեանը վերայ խօսելուն, Հայաստանեայց մեծ Բարերար Ս. Լուսա-
ւորչայ վերայ ալ ծանր ակնարկութիւն մի կընէ այսպէս. «Օ՛չ թէ Սուրբն Գը-
րիգոր Լուսաւորիչ մեր հոգիներն յուսահատած միջոցին մեր մտքերն այս աստի-
ճան չխաւարեցներ, եւ մեր անգիր գրերը այլեւս փոքր ինչ խիղճ ուներնար.
ո՞ գիտէ այսօր ի՞նչ պատմութիւն ի՞նչ գրականութիւն պիտի ունենայիք: Հայ-
աստանի կլիման Հայոց հանճարներուն ո՞ գիտէ ի՞նչ երկեր երկնել տուած էր,
որուն մի քանի խուռն ինչ ճշխարներեր արդարեւ սքանչելիք են»:*

*Մենք Սարաճեան էֆ. ի մտոյ ճանչնալու պատիւն ունեցած չենք, սա-
կայն շատ արժանահաւատ անձինք կ'հաւաստեն անոր Հայրենասէր և բա-
րեպաշտ անձ մի ըլլալն: Ուրեմն կրնամք մակաբերել որ չէ թէ չարամտու-
թեամբ, այլ թերեւս հրապարակային նամանաւանդ մի յայտարարութենէ
հրապուրուած՝ դրեր է այդ տողերն, որոց ծանրութիւնն Սարաճեան
էֆինտիի կրօնասիրական դպ ացմանց հակառակ կ'գտնենք:*

Մարդիկ ամեն բանի վերայ դատաստան ընելու կամ կարծիք յայտնելու ազատ են, սակայն պարտաւոր են նախ լինդիրն քննութեան ենթարկել իր ամեն առընչական պարագաներովը, որպէս զի տեսած դատաստանին և յայտնած կարծիքնին տարաժամ և ձախող չըլլան։ Սարաճեան էֆէնտի ևս թէ այս սկզբունքն յարգեր, անտարակոյս Ս. Լուսաւորչի դէմ այդ-տեսի կըծռու վարուելու պատճառ չպիտի ունենար։

Արդեօք ի՞նչ տեսակ փիլիսոփայական և իմաստասիրական միտքայն ուսումնական գրեր և գրեանք էին առանք, որ այդչափ ցաւ կ'պատճառեն, ի՞նչ լեզուաւ և ի՞նչ տառերով գրուած էին, և կամ մեհեանները մէջ ի՞նչ գործ ունէին առանք։ Մինչև այն միջոցներն ուսման և գրականութեան մասին այնչափ յետադէմ էր մեր Ազգն, որ Խորենացին՝ այն ժամանակին ամենէն մերձաւոր պատմագիրն՝ բացարձակապէս կ'կըշտամբէ մեր թագաւորաց անխնամատարութիւնն, որք քնաւ փոյթ տարած չէն ուսման Ազգին մէջ տարածելու։ Խորենացիին այս յանդիմանութենէն տկներև կ'տեսնուի որ մեր երևակայած գրական հանճարներն չկային մեհենից մէջ, բայց ի Սարաճեան էֆէնտիի մի քանի հրաշալիք կարծած նշխարներն, զորս Խորենացին ալ յիշատակած է։

Ս. Գրիգոր Լուսաւորիչ այն ժամանակին ուսեալ բանիբուն և միանգամայն Հայրենասէր անձը, եթէ այդ քանդուած մեհենից մէջ (բաց ի մէկ քանի մոգական ճղճիմ և երկդիմի պատուհաններէ) հանճարաւոր և օգտակար հեղինակութիւններ դտնէր և չխնայէր, հարկաւ իր ժամանակակից մտաւորականներն պիտի յիշատակէին և յանդրագէս պիտի ամբաստանէին զինքը. բայց ընդհակառակն ոչ միայն առանկ յիշատակութիւն մի չեն ըներ և չեն ամբաստաններ, այլ մի օրինակ կ'դրատանն զՍ. Լուսաւորիչ և անոր ամեն ձեռնարկութիւններն։

Թող չհատասայ Սարաճեան էֆէնտին թէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ մեր հոգիներն լուսաւորած միջոցին՝ մեր մտքերն խաւարեցուցած ըլլայ, այլ մանաւանդ համոզուի որ այն խաւարային կուապաշտութեան մէջ մեր մտքերն ալ խաւարի մէջ էին. և Ս. Լուսաւորիչ մեր հոգիներն լուսաւորելուն, մեր մտքերուն լուսաւորութիւնն ալ մեծապէս փոյթ տարած է և ասոր մի մեծ և անհերքելի ապացոյցն այն է որ այն դարէն կսկսի մեր դրականութիւնն ու պատմութիւնն։ Սոյն ճշմարտութիւնն՝ պատմութիւնն ալ այսպէս կ'հաւատայ, «Առնոյր այնուհետև և զԱրշակունեացն տոհմի որեարս, ի վարժս վարդապետութեան պարապեցուցանէր (Ս. Լուսաւորիչ), որոյ առաջնոցն Տրդատ առն անուն, որ և ինաղատ որն իսկ էր՝ ամենայն տանէ իւրոյ»։

(Ագաթանգեղոս էջ 8. Ը. Ժ.)։ Նոյնպէս (Ս. Լուսաւորիչ) հաւանեցուցաներ զթագաւորն, զի գաւառաց գաւառաց և կողմանց կողմանց՝ ի տեղիս [տե]ղիս ժողովեսցին բազմութիւն մանկտւոյ առ ի նիւթ վարդապետութեան . . .» (Ագաթ. էջ 8Հդ.)։

Այս խնդրոյն վերայ Զամչեանց ալ ժամանակակից պատմիչներէն առնելով ընդարձակօրէն խօսած է, զոր հոս նշանակել աւելորդ կ'համարինք։ (Տես Պատ. Զամչեանց հատոր Ա. երես 396-397)։

Գահ մը մնաք ալ Սարաճեան էֆէնտիի հետ ենթադրենք թէ Ս. Լուսաւորիչ հաղուագիւտ գրեանք և հեղինակութիւններ այրել տուաւ, բայց այսու հանդերձ պարտաւոր ենք խոստովանիլ թէ Հայաստանի Հաւատոյ լուսաւորութեան և ուսման յառաջադիմութեան մեծ գործերն առանց այդ զոհերուն չէին կրնար արդիւնաւորել, ինչպէս որ մանաւանդ այս խնդրոյն վրայօք մեր Լոյս Հանդիսի երկրորդ շրջանին մէջ (թիւ ԺԹ. երես 241, 257, 273, 289, 305,)լիակատ ընդարձակ գրած ենք, որոց վերայ անգամ մը հրաւիրելով Սարաճեան էֆէնտիի ուշադրութիւնն, այսքանով կ'վերջենք խօսքերնիս։

* * *

Ա Զ Գ Ա Յ Ի Ն

Ազրիանուպոլսէն հասած մի մանաւանդ նամակէ կ'տեղեկանամք թէ յաւարտ Մեծի Պէնտէկոստէի՝ Հոգեշնորհ Տ. Աբիստակէս նորապատակ վարդապետ փափազեան ի լրման քառասնօրեայ աւտեղ սրբութեան նախնծայ Ս. Պատարագն մատուցած է ի Ս. Թորոս եկեղեցւոջ ի ներկայութեան ժողովրդեան խուռն բազմութեան և օրուան պատշագային համեմատ ոգեշարժ քարոզ մի խօսած է. նոյնպէս ի Տօնի Ս. Հոգիսիմեանց ալ կանանց համար Ս. Պատարագ մատուցած և ի հոգևորս մխիթարած է։

Փափազեան Շնորհաշնորհ վարդապետի կոչման և ստացած բարձր պաշտաման վերայ մեր կրկին խնդակցութիւնն յայտնելով կ'մաղթենք, ժրբաջան մշակ լինիլ այգւոյն Հայաստանեայց։

* * *

Երկուշաբթի օր կրօնական ժողովն երկար ժամեր Իսկիւտարի Ս. Խաչ եկեղեցւոյ փարոզչի խնդրովն զբաղած է, դարձեալ սեղանն Աւագ քահանայն իւր քղանչէն ժողովուած պատրիարքարան վաղած է. մինչդեռ ժողովրդային հանրադրութիւն մի ալ հակառակ այնմ դոհունակութիւն կ'յայտ-

նեն իրենց քարոզչէն և չարամտութեան արդիւնք կ'գտնեն մէկ երկու քա-
հանայից ըրածն։

Մենք չենք յուսար որ Կրօնական Պատկառելի ժողովն չնչ «՚ղեր յո-
խորտացող եկեղեցւոյ խոնարհ պաշտօնէին սրտի զարկոյնն և նպատակն չը
հասկնայ առաւել քան զմեզ և անխօս ու անլուր պիտի մնալ այն իրաւունքն
ոտնակոխ ընէ՝ միտ դնելով նեւթուած ու պատրաստուած անխղճութեան մը։

* * *

Երեկ Ազգային երեսփոխանական ժողովն գումարեցաւ ի Մայր եկե-
ղեցւոյ ի գումբ-գաբաւ ընդ նախագահութեամբ Բարձր. Պատրիարք Սրբա-
զան Հօր և ատենապետութեամբ Պրն. Սահակ Վարսանեանի։

Թամ 7 ին ատեան բացուեցաւ, և նախնեաց նիստերու չորս ատենադ-
րութեանց վաւերացումն լեալ, երեսփոխանական նոր ընտրութիւնք
վաւերացան, որք են.

Ամասիոյ թաղէն

Կոստանդ	Էֆէնտի	Կոստանդեան
Յակոբ	»	Արշակ
Յարութիւն	»	Թիւլեան

Կեսարիայէն

Գէորգ	Էֆէնտի	Գրիգորեան

Յակ Համբնէն ընտրուած մէկ երեսփոխանի ընտրութեան տեղեկագիրն
Թերի գտնելով ժողովն Ձեռնհասութեան դիւանին յղեց։

Ապէկ յետոյ Իրաւասութեան դիւանին՝ Քաղաքական ժողովոյ հրաժարա-
կանին եկատմամբ բերած տեղեկագիրն կարդացուեցաւ և առանց վիճաբա-
նութեան տեղեկագրին եղրակացութիւնն քուէի դրուելով մեծամասնու-
թեամբ ընդունուեցաւ Քաղաքական ժողովոյ հրաժարականն. սոյն միջո-
ցին Պատրիարք Սրբազան Հայրն ալ հրաժարելով ժողովէն մեկնեցաւ, և
քառակաս յուզմունքներէ յետոյ Ընդ. ժողովոյ կողմէն պրկուած պատգամաւո-
րութեան թեկանձանաւքն կրկին եկաւ բազմեցաւ Նախագահական աթոռն։

Երեկուան Ընդհ. ժողովոյ վերջայ այսչափ տեղեկութիւն տալէ յետոյ
Վ՚խոստանալով մանրամասնութիւնքն նշանակել յաջորդ թուով։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ

Բ. Դուռն հետևեալ աղօթքը հաղորդեց լրագրաց, զոր Ծունկաց Պատ-
քիարքարանը շարագրելով Ծունկաց եկեղեցիները պրկած է, որպէս զի ա-
ժէն կիրակի և տօն օրերը կարդացուի և ժողովուրդն ալ ամէն ըսէ։

Ա Ղ Օ Թ Ք

Վասն ամենազօր, ամենողորմ եւ ամենասիրելի վեհափառ թագաւորին մերոյ եւ կայսեր՝ Սուլթան Ապտիւլ Համիտ խանի տեառն մերոյ:

Տէր Աստուած մեր, թագաւոր թագաւորաց եւ Տէր զօրութեանց, որ քոյ անպատում նախախնամութեամբ, զերազոյն բարութեամբ եւ անհասանելի կամօք վասն փրկութեան մարդկան իշխանութիւնս եւ զօրութիւնս հաստատեցեր յերկրի, զծառայս քո առ ի դարձել զբարիս, եւ առաքեցեր զթագաւորս եւ զիշխանս առ ի պատուհասել զչարս եւ վարձատրել զբարիս:

Վասն այսորիկ, Միածին Որդի քո Տէրն մեր Յիսուս Քրիստոս, որ մարդացաւ վասն փրկութեան աշխարհի եւ վասն ուսանելոյ մարդկան զսէր Աստուծոյ եւ զընկերին, պատուիրեաց մեզ ընդ հնազանդութեան թագաւորին երկնից եւ զհնազանդութիւն թագաւորաց երկրի յառնէն՝ Տուր զկայսերն կայսեր եւ զԱստուծոյն Աստուծոյ, եւ ի բերանոյ Առաքելոյ խրոյ պատուիրեաց մեզ հնազանդիլ իշխանութեանց հաստատելոց, եւ աղօթս առնել վասն թագաւորաց եւ ամենայն իշխանութեանց:

Հնազանդեալք ուրեմն Աստուածային բանիւ, աղօթս առնեմք ի ժամս յայսմիկ վասն Վեհ. կայսեր մերոյ եւ Տեառն Սուլթան Ապտիւլ Համիտ խանի:

Շնորհեա նմա զկատարեալ առողջութիւն եւ կեանս երկարս: Զօրացո՛ զթագաւորութիւն նորա եւ տուր յաղթութիւն զօրաց նորա ի վերայ թշնամեաց իւրոց՝ խօսեաց ի սրտի բարութեան նորա վասն ամենայն ժողովրդոց յանձնելոց ի հայրական խնամս նորա: Լուսաւորեա՛ եւ զմիտս ժողովրդոց նորա, որպէս զի կեցցեն խաղաղութեամբ եւ եղբայրական սիրով ընդ միմեանս, մնալով հաւատարիմ եւ անձնուէրք թագաւորութեանս հաստատելոյ ի վերայ իւրեանց կամօքն Աստուծոյ:

Աղօթս առնեմք քեզ եւ վասն խաղաղութեան ամենայն աշխարհի՝ զի դու ես տէր խաղաղութեան եւ բաշխող ամենայն բարութեանց:

Փառք քեզ, Հայր Որդի եւ սուրբ Հոգի այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամեն:

Մասխ

* * *

Ծունկս Սրբազան Պատրիարքն երկուշաբթի օրը Վեհ. Սուլթանին ներկայանալով, Ն. Կ. Վեհափառութիւնն իւր ձեռօքն Ա. կարգի Օսմանիէ (1) պատուանշան մը տուաւ անոր:

(1) Արդէն Ն. Սրբազնութիւնն Ա. կարգի Մէճիտիէ պատուանշանն ունէր:

Ակնկեց զատ իմանալով որ Փէնէլի վերջին հրդեհին ժամանակ Ն. Սըրբազնութեան տունն այրեր է, վերատին չինելու համար 1000 ոսկի չնորհեց իր անձնական դանձէն։

* * *

Պասիրեթ լրագիրը կըսէ թէ Բ. Դուռը Կրիտի Քունաց խնդիրները չէ ընդուներ, և հրաման ըրեր է որ Կիրիտացիք հինդ Իսլամներէ և հինգ Քրիստոնեաններէ կազմեալ պատգամաւորութիւն մը ղրկեն ի Պոլիս, որպէս զի իրենց խնդրանաց վրայ պէտք եղած բացատրութիւնները տան Բ. Դրան։

Նոյն թերթը կ'ծանուցանէ նաև թէ ղինւորական իշխանութիւնը վերջին օրերս հարիւր տակառ վառօդ բռներ է, զոր նաև մը ուսկոր էր ցամաք հանել Սէլինոի ծովեզերը։

Մասիս

* * *

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ռուսիա պարտաւորած է կրասի 218,000 մարդի ղէն կոչել կովկասեան ապատամբութիւնն մեծնալուն պատճառաւ։ —Կ'հաւատան թէ Ռուսաց Օլթիէն ետ քաշուած ըլլան։ —Բումանիոյ Ռուսական բանակին մէջ գտնուած 13 դումարտակ Չերքէզ հեծելազօրք երկաթուղւոյ կառքերն դրուելով ի Քէշնէվ փոխադրուած է, թերևս վախնալով որ Օսմ. բանակն կանցնին, սոնաք Սիպերիոյ բերդերու պահապանութեան պիտի ղրկուին եղեր։ —Ռուսաց բանակի կեդրոնն Տփխիսէն Աղէքսանդրաբօլ փոխադրուած է։ —Անգղիոյ կողմանէ ղրկուած զինւորական պաշտօնակալին Ռուսիա արտօնութիւն տուած է Գանուբի վերայ կատարուած զինւորական գործողութեանց ներկայ գտնուելու։ —Միլան իշխանն իր արտաքին եւ սահերազմական գործոց նախարարներուն հետ ի Պուքրէշ գնաց Չարլս գալուստն ողջունելու։ —Քօրէնսբօնտաս Բօլիթիք լրագիրն Քաթարօֆն ընդունած հեռագրով մի կ'ծանուցանէ թէ Բէրսթակի մօտ 55 ժամ մի արիւնալի կռիւ չեռոց Գարատաղցիք առանձնացան ի Պանեանի։ Երկու կողման տեղի ունեցած կորուստն մի քանի հազար մարդոց կ'յանգի։ Օսմ զօրեղ գունդ մի Գարատաղի Վասօյէվից նահանգն մըտնելով, Գարատաղցիք պաշտպանողական դիրք բռնեցին եւ բանակի կեդրոնն Օսթրօկ քաշուեցաւ։ —Սէլանիկի նախորդ կուսակալ Տէրվիշ փաշա Պաթումի կայսերական զօրաց հրամանատար անուանեցաւ, եւ չորեքշաբթի օր Օգոստափառ Կայսեր ներկայանալով մեծ չնորհք գտաւ։ —Շաբթուս Ա յտրնի դաւառէն 3000 Չէյպէք կամաւորք եկան, յորս մի քանի ալ Քրիստոնեայ կ'գտնուին, կրասի թէ Չէյպէքներու գումարտակն ի Գարատաղ պիտի ղրկուին։ —Օտէսայի հրապարակի մէջ զինւորական փորձեր կըլլան եղեր, եւ մանաւանդ այս 12 մատ տրամագիծով մի թընդանօթ կ'փորձեն, որ 7 վերստ տեղ ռումբ կարձակէ։ —Մեսաժէ տը Օտէսա կ'գրէ թէ «Օտէսայի նահանգապետն իսպառ թափուր վիճակի մէջ է, փոքր տորմիղ միայն կայ որ նա՝ալ մինչ փորձերով կզբաղի, ծովեզերքի հսկող զօրութիւնն սպառեա եւ

մեծամեծ դիւռակներով ծովուն մէջ նետուրան կ'ղրկեն, եւ մինչեւ 3 ժամ հեռուն գնա-
նաւահանգիստն չմոռած զայն ակնարկ կ'տեսնեն, դիշերներն ելեքտրական պայծառ
լոյսեր կ'վառեն. քաղաքին չրջակայքն զանազան տեղեր գետեղուած պաթարեաններ-
ըն ամենքն ալ միմեանց հետ հեռագրաւ կապուած են. առաջին Պաթարեան նա-
ւահանգստին բերանն գրուած է, որ նաւուց կ'ծանուցանէ անդգուշաբար չ'յառա-
ջանալ» : —Վիէննայէն հասած հեռագիր մի կըսէ թէ պատերազմող Տէրութեանց
Թօրբիլ ղրկուիլն արգիլուեցաւ : —Լէվանթ իւր կարնոյ թղթակցէն Մայիս 31 թուով
ընդունած նամակաւն կ'յայտնէ թէ [«Ռուսաց աջ թեւի բանակին յառաջապահք
Բիւինէք կ'ընակին, կեդրոնէն դէպ ի Վիգին եւ ձախ թեւին մեծագոյն մասն Իչ-
Քիլիսէ, որա յառաջապահք Թօբրաք-Գալէ հասած եւ մի քանի փոքրիկ կռիւներ
տեղի ունեցեր են : Իսկ Օսմ. զօրարաժնի ձախ թեւին մեծ մասն Օլթի կ'գտնուի,
ուրիշ մի Արտանուչ եւ մի ալ Քարա-Ուրղանի մէջ : Մուխթար փաշա միշտ . . . .
գունդ ունի . . . . պաթարեա ունի, 500է բաղկացեալ Չէրքէզ գումարտակ մի եւ
20ի չափ Քիւրտք, նեռերով սպառազինեալ յառաջոյ բանակին կ'հակեն եւ կարեւոր
զինուածիւններ կրնան յարաժամ բանակին առջեւէն ընթանալով . . . » : —Մինչդի
Մուսուռաֆա փաշա կարսի կողմն եղած զօրաց հրամանատար անուանեցաւ : —Մա-
սիս Լէվանթէն առնելով կ'գրէ թէ՝ «Մայիս 19/31 թուով կարինէն գրուած մի նա-
մակէ կ'տեղեկանամք որ Մշոյ եւ Վանայ գաւառներուն մէջ գտնուող քիւրտերը
դաւաճանութեամբ Ռուսաց կողմը բռնելով օգնական զօրք կուտան անոր : Մանա-
ւանդ Տէրսիմի լեռներուն իշխող Շահ Հիւսէին պէյը քիւրտերու ճշմարիտ բանակ մը
կազմած է : Այս մարդը պատերազմին հրատարակութենէն առաջ կարին եկած եւ
այն ժամանակի կուսակալ Սամիհ փաշային տասն հազար Քիւրտ ձիաւոր խոստացած
էր : Զենք դիտեր թէ մի եւ նոյն ժամանակ կարնոյ Ռուսական հիւպատոսին ալ իՙնչ
խոստացեր էր իւր ծածուկ տեսակցութեանց մէջ : Այն օրէն սկսեր էր Տէրսիմի լեռ-
ներէն Քիւրտ ձիաւորներ ժողվել Վեհ. Սուլթանին օգնելու պատրուակաւ : Արտա-
հանի առման վրայ Շահ Հիւսէին դիմակը վար ձգեց : Ինքզինք կատարեալապէս
անկախ հրատարակեց, եւ հիմա Ղուզուլճան կը գտնուի տասն հազար սպառազէն
հեծելովք : Ուրիշ Քիւրտ պէյ՝ մի ալ կէզօ անուն՝ հազար մարդով Ճէպէճի Պօղազ
անուն կիրճը բռնած է, Երզնկայի եւ կարնոյ միջեւը, վերջինէն երեք ժամու ճամ-
բայ հեռի : —Լէվանթ կ'գրէ «Իրաւի թէ եւ վերջին օրերս հասարակութեան մէջ
ղրոյց մի երեւան ելած է իբր թէ Ռուսք 15000 հոգի զոհ տալով Մաչինի կողմէն
Դանուբն անցեր են, բայց ասիկայ մի աւուր գործ չըլլալն յայտնի է : Բայց ատոր
կրնաւ նա եւ որ Թուրքուքայէն քիչ մի հեռի Դանուբի աջ կողմն ալ այս օրինակ
անցք մի տեղի ունեցած ըլլայ : Մենք թերեւս չհակառակինք Դանուբի այս կողմն
Ռուսական զօրք գտնուելուն վերայ, բայց կրսենք որ ասոր ատոյգ կամ անատոյգ
ըլլալն քիչ օրէն կ'յայտնուի» : Լէվանթի այս գրածն մեզ հաւաստալի չթուիր :

Պ· ՏԸ ԳԱՄՕՐ
ՀԵՂԻՆԱԿ ՕԳՈՒԱԿ ՑԼՕՑՔ
ԹԱՐԳՄԱՆԻՉ Գ. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
Գին 1 Ցլանք 5 սանդ իմ:

ԴԵՂԱՐԱՆ Ս. ՔԻԹԱՊՃԵԱՆԻ

Գոմ–Դարմի Ազգ. Պատրիարքարանի փողոցն Մայր Եկեղեցւոյ կառուածն եւ դան դեղարանի մէջ կ'գտնուին խիստ ընտիր, ազդու եւ փորձեալ դեղերայք, ամենքին եւ քաղցրահամ եւ առհասարակ դիւրամատչելի գնով, զորս առաջ կ'նշանակենք ի դիտողիւն Արդոյ Հասարակութեան :

	Ոսկի գին.	Արծաթ գին.
Մաղ նեկնելու Ջուր մին	1	
» » » » Յո		1
Մաղ երկարցնելու իւղ մը	1	
Գլխու թէկին համար բոյսեր մը	1	
Աչքի լոյս զօրացնող լուծ մը	1	
Աչքի ցաւի Ջուր մը		1
Աչքի բորոտութեան եղ մը	1	
Միզող տղայոց խոտիի մը հաս	1	
Տղայոց լուծողութեան չուրուսլ		1
» որիմոմատի չուրուսլ		1
» բուֆիյայի իւղ մը		1
» փորահարութեան թօղ մը		1
Ջէլիվի չուրուսլ	1	
Ակրա մաքրելու բէմոլէ թօղ		1
Վիտեղը զօրացնող սեւ թօղ		1
Ծծի պտղին ճաթածին եղ մը		1
Ծծի ուռկքի հախը մը		1
Ականջի թարախ վազածներու չիրին	1	
Մաշկ քակող չէրպէխ մը		1
Լուծողական կայսերական հաս		1
Բորտներու մէհլէմ	1	
Բերդ աւազ եղտնելու եղ մը		1
Եէլի համար հախը մը		1
Մէչքի ցաւի հախը մը	1	
Զիպանի սեւ հախը		1
Ուռկցքներու կանանչ մէհլէմ մը		1
Այրուածի իւղ մը Ա. օրը		1
Բ. աւուր մէհլէմ մը		1
Ամեն տեսակ սանձի Ջուր մը	1	
Արիւն կտրանցնողի Ջուր մը		1
Հազ կակղցնող հաս		1
Խաղխի չրեղն մը	2	
Մաած ասեղ հանել	2	
Կանանց երեսը ճերմակցնող եղ		1
Երեսի ցանի համար եղ մը	1	
Երեսի բիծերը հանելու Ջուր մը	1	

Եւ այլ այս կարգի դանազան դեղերայք արժան գնով կ'պատրաստուին :

Գ. ՆԻԿՈՂՈՍԵԱՆ եւ ԸՆԿ. ԾԽԱԽՈՏԻ

Գործարան Ամմա ալրը Բիւրիճճիլեր թիւ 62

Պէչիկճաչլի Նիկողոսեան Պետրոս ազան՝ որ խիստ երկար տարին իր յաճախորդներուն ըստ ամենայնի գոհ ըրած է, այս անգամ իր եւ Ընկերաց գործարանը չիշեալ տեղը փոխադրած ըլլալով, պատիւ ունի ծանուցանել Արդոյ հասարակութեան որ նոյն գործարանին մէջ եէնիճէի խիստ ընտիր, հոտով եւ ազնիւ ծխախոտներ ամեն տեսակին կ'գտնուին, այնպէս որ գնողներն խիստ գոհ պիտի ըլլան :

ՏԷՐ—ԽՄԲԱԳԻՐ
ՀՄԱՅԵԱԿ Ծ. Վ. ԴԻՄԱՔՍԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՅԱՊՏԱԿԵՑԵՔԱՑՑ
կ. Պոլիս Եեին–Դարբ. Գումպալ փողոց թիւ 200